Գետոյս հիւսիսային մասը բացի մարգագետիններէ ունի նաև վարելահողեր, որք քիչ ինչ հակեալ զառի վեր են մինչև Դահար գիւղն, որ գետէն 2 ժամ դէպի հիւսիս է, աստի ևս Դռամ լեռներն կը շարունակուին մինչև Գաբեղենից[1] սահմանը։

Այս ընդարձակ հովասուն և ջրալից վայրի մէջ մեծ վայելչութիւն կը վարեն քանի աննշան քրդեր, մանաւանդ Իշէկ, Դահար և Քիւրա-Ալի, որք թագաւորական խճուղւոյն վերայ հաստատուած են և գրեթէ ամբողջ Խալեազի տէր դարձած են։ Նոքա հազարաւոր մարգագետիններու խոտն կը վաճառեն պարսիկ կարաւանատերանց, ունին պանդոկներ, մեծ դեր կը խաղան ձմրան բքուն, կարաւանը օրերով կարգելուի, երբեմն շաբաթներով այս բքալից լեռներուն մէջ. արի, տես, կարաւանատէրն ի՞նչ կը քաշէ, կրակի գնով խոտ, դարի ու հաց պիտի գնէ, գիւղացիք միջոց դտած են կամաւոր կողոպուտի, իրենց ուղածն կառնեն, շատ անգամ ևս անհամաձայնութիւնք, սպանութիւնք տեղի կունենան, միշտ Թ. Գալէի դատարանին կդիմեն։

Շեռեան Ջրի հարաւային եզրի վերայի գիւղօրայք։

1. Զաթ[2] որ կը դանուի Խալեազի արևմտեան հարաւն Ջրից 1½ ժամ հեռուն, Խնուսայ սահմանագլուխը, Կէլինի մօտ, ունի 8 տուն քուրդ բնակիչ

---

1. Ըստ այլ եւ այլ ծանօթութեանց Գաբէղեանք լինելու է Սուկաւէտից յարեւմուտս Տելիքաբա երկարացած լեռներու շղթային հիւսիսն, որ մեծ եռանկիւն մի կը կազմէ Երասխայ աջ ափին վերայ. մեծ մասամբ լեռնային եւ խոտուէա, թերեւս այսօր Գափռ քրէական գիւղն, որ կայ Սուկաւէտի ստորոտն Գաբէղեան անուան աղաւաղումն լինի։

2. Զաթ անուն գիւղեր 5—6 հատ կան Բագրեւանդայ մէջ, որ կրծի կամ խոր ձորակի մէջ շեղուած մի անկիւն շինուած է եւ յանկարծ կը տեսնուի երբ գիւղին մօտեցած ես։։